

ցաւ ի հիմանէ սրբատաշ քարիւ, ներքոյ եւ արտաքոյ, կմբեթաւոր երկնանման եւ գեղեցիկ յօրինուածովք, շրջապատ եւ բարձրաձեւ պարսպաւ եւ խցերօք»։ Կը շինէ հասութարեր խանութներ, կը ստանայ վանքին համար նպաստներ բարերարներէ, կը նուիրէ վանքին սպասներ եւ այլն։

Աւետիք կը վախճանի 1710ին, ունենալով իրեն յաջորդ իր աշակերտն Արրահամ Վ. Ալամեցի (Բանասէր, 1905, էջ 296)։

Խնդրակատար Ս. Աստուածածնի վանքին Յիշատակաց Մատենակ

Frédéric Macler գտած է գրուած քսանխորագիր Պարխի Աղգային Մատենագարանի Թ. 195 (Supplément arménien 41) ձեռագրին մէջ, ընդ ամէնը 8 թուղթ, 2.30 x 1.65 հմ. մեծութեամբ, եւ հրատարակած է Notre-Dame de B'tlis վերնագրի տակ Բանասէր ամսաթերթին մէջ 1905, էջ 289—303. տե՛ս վերը § 4, ծան. 2: Այս գրութիւնը յաճախ յիշուած է աշխատութեան մէջ իրրեւ «Մատենան Յիշատակաց»։

Կը սկսի «Գոհութիւն, պատիւ եւ փառք էութեան ինքնազոյի... օրհնութիւն Հօր... սիրեալ զեղանիցի... ի վերայ աստուածարնակ սուրբ Ուխտիս, եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւազաց եւ միաբան եղբարցն ամենեցուն որ աստ կան հաւաքեալ...: Եւ ընդ աստուածապարզեւ օրհնութեանս զիտութիւն լիցի ձեզ... զի այս Սուրբ Աստուածածին անուն եկեղեցիս... ի թվին ԶԿԳ (1514) ոմն բնաւոր Սօֆ անուն... աւերելով, թալանելով եւ կողոպտելով երեք ամ ամացի եւ աւեր մնաց քաղաքս այս, վանքին եկեղեցիք» (էջ 291—293)։

Այսպէս ընդարձակ օրհնութիւն հայցելով վանքին բնակիչներու, անոր բարերարներու եւ Բաղէշի եւ անոր շրջակայ գիւղերու ժողովուրդին համար, կ'անցնի 1518էն ի վեր վանքին առաջնորդներու շինարարական եւ անտեսագիտական գործունէութիւնը եւ բարերարներու նուիրատուութիւնները յիշատակել (էջ 293—303)։

Մատենան հիմնական մասը գրուած է 1703ին, ինչպէս կ'իմացուի ակնարկութենէս. «զարձեալ այսօրիկ են կացեալ առաջնորդք եւ տեսուչք սուրբ ուխտիս, զորս կարացաք զիտել ի ԶԿԳ (1514) թուականէն մինչեւ եկեալ հասեալ առ մեզ, որ է թուական ՌՃԾԻ

(1703): Նոյնպէս կ'ըսուի. «Յեա նորա (Դաւիթ Բաղիշեցոյ) Աւետիք վարդապետն, որ է այժմ առաջնորդ եւ վերատեսուչ սուրբ ուխտիս, որ Խնդրակատար սուրբ Աստուածածին վերածայնի» (էջ 293)։ Այս տեղիքները յայտնապէս ցոյց կու տայ, թէ 289—293 էջերը գրուած են Աւետիք վարդապետի առաջնորդութեան ժամանակ կամ ուղղակի իրմէ եւ կամ անոր աշակերտ Ալամեցի Արրահամէն։ Ինձի կը թուի թէ այս մասը կազմուած է Աւետիքէն. եւ իրեն հայոց տեղիքները երկրորդի մը ձեռքով բարեփոխուած են։

Յիշատակաց Մատենան շարունակուած է այնուհետեւ Աւետիքի յաջորդներէն մինչեւ 1760 (էջ 294—299)։ Այս 1760 տարւոյն կը վախճանի Սահակ վարդապետ եւ կը յաջորդէ Վարդան, «որ է աշակերտ Երեմիա վարդապետին, ի մանկութենէ սնեալ եւ վարժեալ ի նոյն վանքն Խնդրակատար սուրբ Աստուածածնին»։ Ինչպէս կը գրէ ինքնին. «Ես տրուց եւ ամենից ծառայ Վարդան վարդապետս հրամանաւ Աստուծոյ, կամեցողութեամբ սուրբ Գէորգոյ իշխանացն նստայ ի վանքն առաջնորդ ի թուոյն ՌՄԹ» (1760)։ Իրմէ գրուած են էջ 299—303, ուր կը յիշուին իր օրով եղած նուիրատուութիւնները։

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԲԱՐՍԵՂ Վ. ԱԻՆՆԵՑԻ, ԿՈՉՈՒՐՈՎ ՎԱՐՎԱՅԵՑԻ 1591—1608

Բարսեղ ծնած է Վանայ ծովի Աւան գիւղը. ասկէ կոչուած Աւանցի։ Իր ծնողներն են Ստեփանոս եւ Խաթուն Բէկիջան. կը յիշուի եղբայրն՝ հիւան Գրիգոր։ Իր քեռիներն են՝ Կարապետ Զամալ Արարեցի, բարունակաւ փիլիսոփայ, որմէ ուսած է Մանրումունքը, եւ տէր Յովհաննէս քարտուղարն, որ պէտք է եղած ըլլայ իր գրչութեան արուեստի ուսուցիչը։ Կ'ուսանի Վարազայ վանքին մէջ. ասկէ Վարազեցի յորջորջանքը։ Կը ստանայ վարդապետական իշխանութիւնը եւ կ'ուսուցանէ Վարազի մէջ. իր աշակերտներն են տէր Զաքարէ (այս պատրիարք), տէր Յովհաննէս, տէր Ներսէս, Ղազար սարկաւազ։ Կը գովուի իր ձայնը։ Զբաղած է

նաեւ գրչութեամբ։ Փիրղալմեան կը գրէ. «Բարսեղը վախճանուել է 1615 թուին Ամբոցլու վանքում»։ Բայց այս տարւոյն Ամբոցլու մէջ վախճանողն է Բարսեղ Բաղիշեցի։

Ունիմ իր մասին Յիշատակարաններս։

1. Աւետարան, գրուած ի Վարազ, Բարսեղ արեղայի ձեռքով. «Եւ գրեցաւ սա ի թուարեութեանս Հայոց Ռ եւ Խ (1591), ի հայրապետութեան տեսնն Մելքիսեդի եւ մերոյ աթոռակալութեան առաջնորդի սուրբ ուխտիս Վարազայ Ստեփաննոսի եւ Կարապետ բարունակաւ քաջ եւ արի փիլիսոփայի, մականունն Զամալ վարդապետի, ի մայրաքաղաքս վանօրէիցս ի Վարազ, ընդ հովանեաւ սուրբ նշանիս, ձեռամբ անարժան եւ սուտանուն Բարսեղ արեղայի անարհատ գրչի... զստացող սուրբ Աւետարանիս գլխուն Հայրապետն... եւ զիս զանարժան զծող զԲարսեղ եւ զԾնողքն (իմ) զՍտեփաննոսն եւ զՊէկիջանն եւ զհոգեւոր հայրն եւ զքեռին իմ զԿարապետ բարունակաւ փիլիսոփայն մականունն Զամալն... այլ եւ զաշակերտս մեր... Զաքարէն, զտէր Յօհաննէսն, զտէր Ներսէսն, զՂազար սարկաւազն, զտնտես Կաթոն, որ աշխատեցան ի կոկել թղթին, եւ զտէր Փիլիպպոս վարդապետ որ կազմեաց զսուրբ Աւետարանս... (շարունակութիւնը՝ 1581—1584 տարւոյ քաղաքական-պատերազմական անցքերու նկարագրութիւնը)։

Աւանց գիւղը Խոշուած բոլորգիր Աւետարան. Գ. Աղանեան, Գիւան Հայոց պատմութեան, Ժ., էջ 33—38: Նոյնը աւելի կամ պակաս կրճատուածով՝ Սմբատեանց, Երնջակ, էջ 261—263։

2. Վենետիկ, Գ. Մանրումունք. «Ի թվիս ՌԽԳ (1594) ստացող տառիս Բարսեղ Վարազեցի, գտակաւ Տէր ողորմեայքս գրեցի» (Պոտուրեան)։

3. Շարակնոց, ունի մանր յիշատակաւրութիւններ. գորոնք յառաջ կը բերեմ. «Չստացաւ սորա զտէր Ներսէս վարպետն զաշակերտն մեր եւ զԲարսեղ Աւանցին զծողն իշեցէք... թվ. ՌԽԵ = (1596: էջ 759. հմտ. նաեւ էջ 613)։

«Յիշեցէք առ Քրիստոս զԲարսեղ զծող Վարազեցին. թվ. ՌԽԵ (էջ 941. հմտ. նաեւ էջ 78 եւն)։

«Աւաղ զհարազատ եղբայրն իմ զհիւս Գրեգորն, որ հիւանդ եկեալ Աւանուց եւ փոխեցաւ ի Քրիստոս աղա հասակաւ ի դուռն

սուրբ Նշանին Վարազայ. եւ երբ դառն սուրբ. արտում եւ արխուր զիմաւք շաւաք եւ լալտ աշաւք գրչի զՇարական սուրբ Աստուածածնին. թվ. ՌԽԳին: Աւաղ ախոսս զվարպետն հիւանց... (էջ 573, 139)։

«ԶԶաքարիայ. Մատթէոս. Ներսէս»։

Բարսեղ երբեմն Վարազեցի եւ երբեմն Աւանցի կը կոչէ ինք զինքը։

= Paris, Bibliotheque de l'Ecole Spéciale des langues orientales vivantes, acquisitions No. 1028: Fr. Macler, Notices de manuscrits arméniens vus dans quelques Bibliothèques de l'Europe Centrale. Paris 1913, p. 151—153 = JA 1913, p. 651—666.

4. Աւետիս քահանայ Մոկացի կ'օրինակէ Ոսկեփորիկ մը 1602ին Վարազի վանքին մէջ «ի յառաջնորդութեան սուրբ ուխտին Վարազայ տէր Ստեփանոս արքեպիսկոպոսին եւ ի դասուորութիւն (այսպէս) տէր Բարսեղ վարդապետին, որ զկէս գրոցս գրեր էր. զքաղցրածայն երաժիշտն, զբանաւոր ծիծեռն. Աստուած զինքն անայթաքելի պահեցէ ի պարճանս մեր: Եւ զիս զանարժանի տէր Աւետիս Մոկացի, որ զկէս գրոցս գրեցի եւ աւարտեցի ի քաղաքս Վան...: (Յիշեցէք) եւ զՅօհաննէս եպիսկոպոսն Վարազեցի որ զօրինակն շնորհեաց... եւ զԲարսեղ զծող վարազեցին, որ զԳԳ տետր ճառքս գրեցի ըստ կարի իմում. եւ Աստուած ողորմի ասացէք ինձ եւ ծնողաց իմոց Ստեփանոսին եւ Խաթուն Բէկիջանին. եւ քեռուն իմոյ Կարապետ բարունակաւ փիլիսոփային, մականունն Զամալ Արարեցուն եւ միւս քեռուն տէր Յօհաննէս քարտուղարին... եւ տէր Ստեփանոս զառաջնորդ սուրբ ուխտիս Վարազայ եւ զտէր Ստեփանոս Ղազարի մահապառն...:»

Կաշառ երեւ ինձ սէր.
Թէ մեղրով խառնեա ու կեր.
Ապա զիմ բաժինն բեր,
զու առողջ լեր:
Ես գրագիր ու մեղրակեր.
յաշաց լուսոյ եմ պակասեր.
Ապսպրանք ինչ եմ ասեր,
Թէ հետ լուսոյն բեր:
Դու գրողմամ փուտ արեւոր,
որ ի յուժէ ես պակասեր.
Է յաշաց լուսոյ չի մնացեր,
եկեղեցպան ես դու կացեր.

